Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **<< 11>> 03. 2026թ. ժամը 11:00**

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի վարչության պետի տեղակալ Ռ. Մկրտչյան (հանձնաժողովի նախագահ),

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ Վ. Մաթևոսյան (գնահատող անդամ),

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության անձը հաստատող փաստաթղթերի թողարկման վարչության անձնագրային աշխատանքների համակարգման բաժնի պետի պաշտոնակատար Ս. Մուշեղյան (գնահատող անդամ),

Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ասատրյան (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար տոներային քարթրիջների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-19 ծածկագրով ընթացակարգի գնահատման նիստում արձանագրվեց՝

1. **Տեղեկություն ընթացակարգի ընթացքի մասին.**

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-19 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են ներկայացված հայտերը: 1-8 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից IT Technology LLC-ի հայտում արձանագրվել էին մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից բոլոր չափաբաժինների մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր հավելվածներում չէր նշվել առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը, ինչպես նաև փաստաթղթերը հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Հայտով չէր ներկայացվել նաև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի: Հանձնաժողովի կողմից գնահատման նիստը կասեցվել էր 1 աշխատանքային օրով և IT Technology LLC-ին առաջարկվել էր մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Շտկումը մասնակցի կողմից չի կատարվել ժամանակին: Ներկայացված հայտը գնահատվում է անբավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Մկրտչյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մաթևոսյան

Ս. Մուշեղյան

Քարտուղար՝ Հ. Ասատրյան